«Հունգարիոյ առևտրական նախարարութեան պաշտօնեաներէն մէկը ճամբորդութիւն կ'ընէ (ինչոր միւս օրաթերթերուն մէջ ալ կարդացուեցաւ արդէն), ուսումնասիրութիւն մը կատարելու համար թէ՛ ինչպէս կարելի է իրենց երկրէն սառած կաթ զրկել Արևելքի երկիրները...: Երկրորդ՝ «... Մելքոն Դանիէլեան անուն երիտասարդ մը Ամերիկայի մէջ խտացեալ կաթ պատրաստելու եղանակը ուսումնասիրելէ յետոյ, Կարս վերադարձեր է, ուր սկսեր է իր մասնագիտութիւնը գործադրել ևն...: Երրորդ՝ թէ «խտացեալ կաթը թուրքիոյ մէջ ալ բաւական մեծ քանակութեամբ կ'սպառուի, հետեւաբար այդպիսի գործի մը ձեռնարկութիւնը կրնայ շահաւոր ըլլալ»:

Չորրորդ՝ թէ «Պոլսոյ թերթերուն մէջ առաջարկ մը եղած է եզեր, Սզգ. Հիւանդանոցի ի նպատակ կաթնորան մը հաստատելու համար, և այսպիսի ձեռնարկութեան մը յաջողութիւնը այժմէն խի կրնայ երաշխաւորուիլ»: Հինգերորդ՝ «եթէ պահանջուի որ, կըսէ, խտացեալ կաթ պատրաստելու համար գործարան մը հաստատուի Եփեսոսի վրայ շրջակայները կամ Շիշլիի կողմը, թերևս անկարելի համարուի այս առարկութիւնը. բայց կաթնարանի մը հաստատութիւնը ո՛չ

մեծ ծախքի և ոչ ալ դժուարութեանց կըրնայ հանդիպիլ. և տարակոյս չունինք որ աւելի լաւ հասոյթ մը կ'արտադրէ, քան թէ սիկաուի թղթի և դերձանի վաճառումը, ուրկէ գոյացած շահը, այլ ևս շատ աննշան գումար մըն է Հիւանդանոցի հաշուետոմարներուն մուտքի կողմը:

Եւ վեցերորդ՝ «Թուրքիոյ մէջ կան Եւրոպայի մէջ գիւղատնտեսութիւն սորված անձեր. փափաքելի էր որ անոնք ալ իրենց կարծիքը յայտնէին կաթնարան մը, և կամ «խտացեալ կաթ՝ պատրաստելու համար գործարան մը հաստատելու կարեւոր խնդրոյն վրայ»: Այսչափ:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Որովհետեւ յօդուածագիրը փափագած է որ Եւրոպայի մէջ գիւղատնտեսութիւն սորված անձեր այս մասին իրենց կարծիքը յայտնեն, ուստի և մենք ալ, ոչ միայն իբրեւ գիւղատնտեսութիւնը Եւրոպայի մէջ ուսած հոգագէտ, այլ և երկար տարիներ ալ Թուրքիոյ շատ մը տեղերը մեր սորվածները գործնականապէս կիրարկած՝ իբրեւ փորձառու հոգագէտ, և նամանուանդ այսօր՝ իբրեւ խմբագիր կամ հրապարակագիր, ճակատաբաց մեր ստորագրութեան ներքեւ, կը փութանք իր հրաւերին պատասխանել պաշտօնապէս՝ մեր կարծիքը յայտնելով:

Նախ թէ՛ գիտէ՞ք արդեօք, խտացեալ կաթը ո՞ւր, ի՞նչ պարագաներու տակ, և ինչպէ՞ս կը պատրաստուի: Հարկաւ ո՛չ. որովհետեւ՝ եթէ գիտնայիք, եթէ գիւղատնտեսութեան վրայ գաղափար ունեցած ըլլայիք՝ երբեք այդպիսի երեւակայական և անգործադրելի առաջարկ մը չը պիտի ընէիք Հիւանդանոցի համար: Տեսէ՛ք թէ ինչո՞ւ: Խմտացեալ կաթը կը պատրաստեն այնպիսի տեղեր, որ մեծ քաղաքներէ հեռի ըլլալով, արտադրուած կաթը՝ իր բնական թարմ վիճակին մէջ սպառելը անկարելի կ'ըլլայ. թէ արտադրութիւնը խիստ առատ ըլլալով, հագիւթէ մէկ լիթրա կաթը 5—10 և առաւուսէն 20 փարայի արժէք կ'ունենայ:

Խտացեալ կաթը ուրիշ բան չէ, բայց եթէ նոյն իսկ բնական կաթը՝ որ չողիւցնելով իր նախնական ծաւալի վերիվերոյ քառորդին վերածուած է, և 100ին 5, 10 և մինչև իսկ

13 ալ շաքար խառնուած. և իր այս թանձրացած վիճակին մէջ թիթեղեայ տուփերով կը ծախուի հրապարակը: Խրաքանչիւր տուփ կը պարունակէ 450 կում (տեղական 150 տրամ) և կը ծախուի 35ն 4ուկէս դհկ.ի:

Ընդհանրապէս՝ մասամբ կամ ամբողջովին կաթը կը սերտեն, (կարագը կ'առնեն) և միացեալ անարատ կաթն է որ կը խտացնեն: Ոմանք կաթին մէջ կը խառնեն նաեւ քիչ մը ուռնուկան թթւում, (ասիտ սալիսիլիք) որ կաթը աւելուցնէ կը պահպանէ:

Խտացեալ կաթ՝ պատրաստելու համար՝ տրամադրելի խոշոր գրամագլուխներ պէտք են. Զուլցերիոյ մէջ մեր գիտցած խտացեալ կաթի մէկ ճարտարարուեստանոցը, որ օրական 3000 քիլօ կաթ կը խտացնէ, 250,000 ֆրանք գրամագլուխ ունի: Գլխաւորապէս մեքենաները շատ սուղ են:

Խտացեալ կաթ՝ պատրաստելու համար, պէտք է ընտիր և առաջին տեսակի եղեգանք շաքար գործածել:

Խտացեալ կաթ՝ պատրաստելու համար, խիստ աջալուրջ հսկողութիւն և մեծ վարժութիւն պէտք է. նոյն իսկ՝ այս պարագային մէջ շատ անգամ, 100ին 10 կ'աւելուի շինուած տոտեն, և եթէ քիչ մը խափուութիւն ալ ըլլայ գործին մէջ, վնասը կը բարձրանայ 100ին 50 կամ 100:

Եւ քանի որ Պոլսոյ մէջ կաթին մէկ քաշը կ'արժէ առ նուազն 2 դահեկան, եւ քանի որ 100 քաշ կաթը խտացնելով 20 քաշ կը մնայ, և իւրաքանչիւր 100 քաշի համար ալ առ նուազն 100 դահեկան ծախք կ'երկայ, հետեւարար՝ ձեր առաջարկն ալ գործնական և բանական ըլլալէ կը դադրի, և ամուլութեան կը դատապարտուի. քանի սը միւսնոյն ատեն ալ շէնքի և գործիքներու համար ահագին գրամագլուխ մը պէտք է, որու առջև առնեմք կը խրտչի, բաց ի Անգլիացիներէն և Ամերիկացիներէն, որոնց ձեռքն է գրէթէ ամեն տեղ հաստատուած խտացեալ կաթի ճարտարարուեստանոցները: Եւ եթէ անհրաժեշտ նկատուած գործիքները տրամադրելի չըլլան, գրէթէ անկարելի կ'ըլլայ խտացեալ կաթ պատրաստելը: Սակայն կարգ մը անձինք կաթին մէջ ալ և ալ թանձրացուցիչ նիւթեր խառնելով կը խարդախեն և այնպէս

կը պատգամաւն խառնուել կաթ, որո՞ւ օրինակ զայլ ինժ (բիթթէ), ևն. ասոր ըսելիք չունինք:

Արդ՝ բոլոր մեր այս ըսածներէն կրնաք հետեցնել թէ, ինչո՞ւ համար ձեր երազը չի կընար իրականութիւն դառնալ Պաշտօն չըջանալն երբ, և մանաւանդ Ազգ. Հիւանդանոցի համար:

Փանք ձեր յօդուածի չորրորդ մասին. ար կ'ըսէք թէ Պաշտօն թերթերուն մէջ առաջարկ մը եղած էր կաթնարան մը հաստատելու ևն: Բայց չենք գիտեր թէ ի՞նչ է պատճառը որ չէք համարձակած ականք յանուանէ բոկը, թէ այդ առաջարկութիւնը եղած է իսկ և իսկ մեր կողմէ նախապէս, թէ՛ Բիւզանդիոնի և թէ՛ Հանրադատակի մէջ (Տես թիւ 26, Բ. Շրջան, 98, օգ. 23): Արդեօք մուսուլմանն արդիւնք է:

Ասիկէ ճիշդ երկու տարի առաջ էր, երբ Ազգ. Հիւանդանոցի և իր յարակից Որդանոցին համար հասցի չունար արդիւններ կը փնտռուէր, և ամէն կողմէ ալ քաղաքացան ծրագիրներ կը մատուցուէր: Մենք՝ ոչ թէ խօսքով, ոչ թէ միայն թերթերու մէջ գրելով, այլ մինչև իսկ գործնականապէս և լրջորէն ձեռք առինք խնդիրը, եւ նոյն միջոցին՝ ծրագիրներ մատուցինք Ազգ. Քնդ. Փոքագոյ, և նոյն տանին Ազգ. Հիւանդանոցի Պատ. Հոգարարութեան: Քանի՛ քանի՛ օրեր, շաբաթներ, ամիսներ եթէ կ'ուզէք, գայինք, եկանք, հետապնդեցինք, թախանձեցինք, բացատրեցինք, պարզեցինք. բայց՝ չենք գիտեր թէ, Ազգ. Հիւանդանոցի ճակատագրէն էր որ, երբ վերջապէս համալուծ գոյացուցաւ մեր ծրագրերու գործարկելութեան և չահեկանութեան վրայ, դժբաղդարար՝ Հոգարարութեան և խնամակարութեան իրենց հրաժարականով, մեր ծրագրերն ալ ամլութեան դատապարտուեցան:

Բայց խնդիրը հոն է որ, արդեօք մինչև ցարդ մեր ծրագիրը իրականութիւն չի գրունելուն բուն պատճառը հոգարարութեան հրաժարելը եղած է միայն, ապա թէ ոչ մեր մէջ Ազգ. գործերու մատակարարութեան մասին, գործնական մարդու դրական գաղափարներով տոգորուած անձնաւորութեանց պակասը:

Մենք աւելի վարժուած ենք «Մուրացիա-

նութեան», քան թէ՛ ժողովան գործունէութեան: Կաթնարանը ի՞նչ կարեւորութիւն ունի, հաստատութեաւ արդիւնները ի՞նչ արժէք կրնան ունենալ: Նուիրատուութիւն. ասիկէ դիւրին ի՞նչ կայ. չէ՞ մի օր, ժողովուրդին պարտքն է իր Ազգ. Հիւանդանոցը պահել: Այ՛ ի՞նչ կը փնտռէք ասիկէ անդին:

Ղ. ԲՈՂԱՏ

ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՊԻՏԱԿԱՑՈՒՄ

Արտհետեւ Խաչ հիւսուածաթելերը առ հասարակ, բնականապէս կամ պատահօրէն, օտար նիւթերով դրուողուած կըլլան, որոնք՝ զուտ խորանիւթի (սկլիւլօյ) բնական սպիտակութիւնը կ'աղքատեն և իր փայլը կը նսեմացնեն, բոլոր ներկելու գործողութիւնէն առաջ, այդ հիւսուածաթելերը սպիտակացուցի գործողութեան կ'ենթարկեն:

Բայց որովհետեւ հիւսուածաթելերը երկու գլխուղար տարբեր սկզբնաւորութիւն ունին՝ բուսային և կենդանային, սպիտակացնելու գործողութիւններն ալ կը տարբերին տեսակին բնական յատկութեանց համեմատ: Նոյն իսկ, այս երկու գլխուղար բաժանումներու վերաբերող իւրաքանչիւր ստորադաս տեսակի մասնաւոր յատկութեանց համաձայն, սպիտակացուցի գործողութիւնները զգալապէս կը տարբերին:

Մենք մեր քննութիւնները պիտի մասնաւորենք միայն, մեր երկրին համար ամենէն աւելի կարեւորութիւն ունեցող հիւսուածաթելերու վրայ, և հետզհետէ պիտի բացատրենք բամպակի, կտաւի, բուրդի և մետաք-

սի սպիտակացուցման գործողութիւնները :

ՍՊԻՏԱԿԱՅՈՒՄ ԲԱՄՊԱԿԻ

Ինչպէս գիտենք, խալ բառակը բնապէս կարգ մը ազոտոս գոյանուերով (substance) դրուագուած է, որ բուն խորշանիւթի բնական սպիտակութիւնը և մայլը կը նուազեն : Այս վիճակին մէջ երբ բառակը մանուկ, ազոտոս գոյն գոյն մը կ'ունենայ . և երբ այս բնական վիճակին մէջ մանուած բառակի թելերը ստալիներով պատտառ ևն . շինուին, այս անգամ ալ դուրսէն աւելցած կարգ մը օտար նիւթերով բոլորովին ազոտոս կերպարան մը կ'ստանան : Այս օտար նիւթերու քանակը՝ իւր, նախ (նիշտոտա) ևն . մինչև 30 առ հարկեր կը բարձրանայ :

Ունտի՝ այսօրինակ պարագաներու մէջ պէտք է, թէ այդ օտար նիւթերը դատել իրմէ, և թէ բնապէս իր վրայ դրուագուած ազոտութիւնները վտարել, որպէս զի՝ բուն խորշանիւթի ճերմութիւնը կարելի ըլլայ ձեռք բերել :

Հին ստեղծները հիւսուածանիւթերը ճերմկեցնելու համար օգին ժանգուտացնող (օքսիտանթ) յատկութեան կը դիմէին, որ բաւական գոհացուցիչ արդիւնք մը կուտար այն ստեղծները . և այս արեգակի եւ խոնաւութեան կրկնակի և փոխադարձ ազդեցութիւններուն տակ, որ վտարելի գոյանուերը լուծելի վիճակի մ'ենթարկելով, ալքալի պարունակող ջուրերու (կալի, նատրոն կամ մանիլջուր) մէջ լուացուած ստեղծին կը գտնուէին հիւսուածանիւթերէն, և ջուրին մէջ կը լուծուէին :

Բայց այս գործիւնը, ճարտարարուեստներու ներկայ յառաջացած վիճակին մէջ չի կրնալով դոհացուցիչ արդիւնք յառաջ բերել, թէ իր թելութիւններով և թէ գործողութեանց դանդաղութեան պատճառով, այսօր գրեթէ բոլորովին բարձրիւթի եղած է բառակիւն համար, և իր տեղ կը գործածուին մեծ յաջողութեամբ ենթաքլորակներու (պոր օրինակ՝ քիրէճ գայմաղի կոչուածը) լուծաջուրերը, որոնց ներգործութիւնը անհունապէս շատ աւելի ազդեցիկ ըլլալով, գրեթէ խառնապէս ժամանակի տեսողութեան խիստ կարևոր նշանակութեան արժանի խնայողութիւն մը յառաջ կը բերէ :

Ճերմկեցնելու գործողութեանց մէջ գործածուած ենթաքլորակներն են՝

Ա. Կալիոնի ենթաքլորակը = (իւրօքլորալ արբոթաիւթ) = , որ կը ճանչցուի Eau de Javelle = ժապէլի ջուր անունով :

Բ. Նատրոնի ենթաքլորակը = իւրօքլորալ արբոթաիւթ, որ Eau de Labarraque = Լապարաքի ջուր անունով կը ճանչցուի . և՝

Գ. Կիրի ենթաքլորակը = իւրօքլորալ արբոթաիւթ = որ պարզապէս քլոր կամ քլորիւթ արբոթաիւթ կը ճանչցուի . և այս վերջինն է՝ որ ամենէն աւելի կը կիրարկուի ճերմկեցնելու գործողութեանց մէջ :

Ինչ որ ալ ըլլայ սակայն ճերմկեցնելու գործողութիւնը, և գործողութեանց մէջ կիրարկուած գոյանուերը, ամէն ալ թթուածին կապի ժանգուտացնող յատկութեան արդիւնքն են, և ենթաքլորակներու կիրարկութեամբ ձեռք բերուած ճերմութիւնն ալ գործողութեանց միջոցին քիմիական հակազդեցութիւններով յառաջ եկած նորոգին թթուածինի արգասիքն է :

Բայց որովհետեւ հիւսուածանիւթերը պարարային և ռետային (ուէջինա) գոյանուերով ազոտած են՝ բնապէս թէ արուեստապէս, քլորի ազդեցութիւնը կը չեզոքացնեն քիչ թէ շատ . ահա այս պատճառաւ՝ քլորի ազդեցութեան ենթարկելէ առաջ պէտք է նախ այդ իւրերը վտարել, որպէս զի սպառած արդիւնքը յաջողութեամբ և նպատակաւոր պայմաններու մէջ ձեռք բերուի :

Այս պարարային և ռետային գոյանուերը ալքալային տաք լուծաջուրերու մէջ կը հալին, և հիւսուածանիւթերէն դիւրութեամբ կը գտնուին :

Պարարային նիւթերը՝ որ իւրաքանչիւր (իւրօքլորալ) ենթաքլորակն են, և կազմուած սպարային թթուանիւթէ (acides gras), ալքալիան լուծաջուրին մէջ օճառանալով յառաջ կը բերեն իւրաքանչիւր և պարարային թթուանիւթէն հետ միացած ալքալեան տաք, որոնց երկուքն ալ կը հալին դիւրութեամբ ջուրին մէջ :


Ռետայիններն ալ իրենց կարգին ալքալեան աղին հետ միանալով, ռետական օճառներ կը կազմեն մոտաւոր, և մեծ մասամբ ալ ջուրին մէջ աւելի մտալով, կը վտարուին հիւսուածանիւթերու վրայէն :

Ղ. ԲՈՒՍ

ՈՏՔԵՐՈՒ ԳԱՐՇԱՆՈՏ ՔՐՏԻՆՔԸ

ԵՒ

ՆԵՐՐԱՆԻ ԱՅՏՈՒՑ



ՀԱՐՑՈՒՄ ԹԻՒ 83

Հանրագիտակի բաժանորդներէն Կ. Ս. Կը գրէ մեզ թէ, իր գործին բերմամբ ամառը ընդհանրապէս ոտքով ճամբորդութիւններ կ'ընէ, և այս պատճառաւ ոտքերը չափազանց կը քրանին, ու անտանելի կերպով... Կը հոտին. և երբեմն ալ կը պատահի որ, ոտքերու ներքեան աշտուցաւորուի (գաղարճը). ուստի այս երկու պարագային մէջ կրնանք արդեօք իրեն փրկարար միջոցներ ցոյց տալ:

ՊԱՏԱՍԽԱՆ

Հետագայ միջոցը կիրարկելով, կրնաք յաջողիլ ոտքի գարշահատ քրտինքին առաջը աւանել:

Տառք քաշ ջուրի մէջ 15-20 ընկուզենի տերեւ (չոր կամ թարմ, հոգ չէ) դնելով եռացուցէք, պաղեցուցէք, և այդ ջուրով մէկ քանի օր առաւօտ երկուց ոտքերնիդ լոգանքի դրէք:

Չարտրդ կամ հինգերորդ օրը ոտքերնիդ օժեցէք հետեւեալ սպեղանիով:

Երկաթի վերքլորուկ (բէւքլորուկ տը ֆէն) 50 կուամ և լուլաշիճ (կլիսէնին) 20 կըռամ:

Այս վերջի դեղը գործածելէ առաջ եթէ անգամ մը ձեր բժիշկին խորհուրդ հարցնէք, լաւ կ'ընէք. բայց սովորական պարագաներու մէջ արդէն երկրորդ դարմանը աւելորդ կը նկատուի, եթէ շարաթը երկու երեք անգամներ, ընկուզենի տերեւի պաղ ջեռաթուրի մէջ ոտքերնիդ լուաք և մանաւանդ սրբած ատեննիդ ալ եթէ ոտքերնուդ վրայ մէկ երկու կաթիլ խնկաբոյր քացախ (վինէկու տը թուալէթ կոչուածը), կամ գլոնական ջուր (օ տը գօլոնէր) կաթեցնէք, աղահոգարար 90 առ հարիւր այդ գարշահոտութիւնը կ'անհետի:

Բ.

ՆԵՐՐԱՆԻ ԱՅՏՈՒՑՆԵՐՈՒ ԴԱՐՄԱՆՈՒՄ

Գերմանական զօրաբանականերու մէջ կը

գործածեն հետագայ սպեղանին, որ անմիջական կերպով ցաւերը կ'ամօքէ, և շուտով այտուցները կը բուժէ:

Սեւ օճառ (սալօն նուառ) 50 կուամ.

Ջուր 25 »

Նաֆթաճարպ 15 »

Ձինկի ժանգուտ (օքսիտ տը զէնք) 5 »

Լաւանդի իսկութիւն (էսանս տը լավանտ) մէկ քանի կաթիլ:

Օճառը խառնեցէք ջուրին հետ, ժանգուտը նաֆթաճարպին հետ, յետոյ երկու խառնուրդը իրար բաղադրեցէք և աւելցուցէք իսկութիւնը:

Եթէ դեղագործի մը պատրաստել տաք, աւելի աղէկ կ'ըլլայ:

Այս սպեղանին ընտիր դարման է նաև, երկարատեւ ճամբորդութեանց ատեն ձիւնորներու երատանը յառաջ եկած սկիթուքներուն, ինչպէս և ոտից այտուցներուն:

Ղ. ԲՈՒԱՏ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

ՍՆՆԵԱԿԻ ՄԸ ՕՐԸ ՄԱՔՐԵԼ

Դրէք սնակի մը մէջ մէկ դգալ սուրճ, մէջտեղը գոգաւորելով տեղաւորեցէք պղտիկ կտոր մը քափուր (քեաֆիրի) ու բռնկեցուցէք. քափուրը այրելով սուրճն ալ հետը մէկտեղ կ'այրի և ատանկով սնեակին օդը կը մաքրուի:

ՄԱՏՆԱՇՈՒՐԹ (տօլամա)

Շատ անգամներ ժողովրդական պարզ դեղեր ալ իրենց օգտակարութիւնը կ'ունենան. ահաւասիկ, մատնաշուրթի համար դեղ մը՝ որ թէև իր խոշորութեամբ անտանելի կ'ըլլայ, բայց նշգրտակի հարուածէն կ'ազատէ ձեզ:

Երբ մատերնիդ ցաւիլ սկսի, լիմօն մը առէք, մէկ ծայրէն կտրեցէք և ցաւած մատերնուդ վրայ անցուցէք. թողուցէք 1-2 օր կամ պակաս, մինչև որ ցաւը անցնի: Հանած ատեննիդ պիտի տեսնէք որ կատարեալապէս բժշկուած է մատերնիդ:

ՁԵՌՌԵՐԸ ԽՆԱՄԵԼ

ՅԵՐԹՅՈՆ «ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»Ի

(5)

ԺԻՒՆ ՎԵՐՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

Սովորաբար այնպէս կը կարծուի թէ՛ ձեռքերու ձերմկութիւնը գաղտնիք մ'է, մենք պիտի բացատրենք մէկ քանի միջոցներ որոցմէ կրնաք ընտրել ուղածելու :

Քիչ մը գաղջ ջուրի մէջ լեցուցէք անուշադր (նիշադր) կամ ոսկեքարակ (թեհեքեար) և լուացէք ձեռքերնիդ, թէ՛ կը մաքրէ և թէ՛ կը կակղցնէ : Իսկ եթէ ձերմկցնել կ'ուզէք, քիչ մը ջուրի մէջ վարտակի ալիւր (եռլաֆ) ցանեցէք և լուացուցէք : Ջուրին տեսակն ալ մեծ դեր կը խաղայ : ամենէն աւելի կը յանձնարարուի անձրեւի ջուրը գոր. օր. ջրամբարի (սառնըմ) ջուրը :

Շատեր պառկած ատեննին իւղաշիճով (կլիսեռին) ձեռքերնին կը մալակոնեն (*), ատրկա փոխանակ մորթը կակղցնելու, աւելի կոշտութիւն և կարմրութիւն կուտայ. աւելի աղէկ է գործածել վարտակի ալիւր, կամ հաւկիթի ձերմկուցը և քիչ մ'ալ պաղլեղ (չապ) իրար խառնելով քսել. և այս դեղն է որ կարգ մը պոռոտախօսներ կը ծախեն բարձր գիներ պահանջելով :

Ամենէն կոշտ և թիւտ ձեռներն անգամ մէկ ամսուան մէջ կարելի է կակղցնել և ձերմկցնել, եթէ շարունակ պառկելու ատեն իրենաբ տարուի : Ամենէն անհրաժեշտ նիւթերը որոնք մեծ բանք չեն, տանտիկին մը կրնայ իւր ննջարանի դարակին մէջ ունենալ : Ահաւարիկ պահանջուածը, պզտիկ չիւզ մը կալի լուծաջուր (քօգաւ կամ սօտա). քիչ մը ոսկեքարակ, քիչ մը վարտակի ալիւր, և լիճն մը. այս վերջինը խիստ լաւ կը մաքրէ մորթը :

Ուրիշ միջոց մ'ալ : Առէք

Ճերմակ քացախ	10 տրամ
Ալբօլ	5 »
Վարդեջուր	5 »
Լեմոնի հիւթ	3 »

Իրար խառնեցէք, և թեթեալէս քսեցէք ձեռքերնուդ :

ԱՐԱՔԱՅ

(*) Կրնայ ըլլալ որ մէկ քանիներ օգտուին սակայն ամեն մորթի համար չէ :

ԱՐՏՈՆԱՏԷՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

Ինծի այնպէս կը թուի թէ՛ սկզբնական պարբերութիւնը կանոնաւորապէս գրուած է. յետոյ օրէնքի մը համաձայն, գոր պէտք է երեւան բերել, հակառակ դարձուած է : Ո՛վ որ այս ծածկագրին բանալին ունենայ կրնայ ջուրի պէս կարգաւ գանի : Բայց ո՞րն է այդ բանալին : Ա.քո՛ւ՛՛, գիտե՞ս այդ բանալին :

Ձի սլատասխանեցի մօրեղբորս այս հարցման, և ասոր պատճառը կայ : Աչքերս՝ պատին կախուած սիրուն նկարի մը յառած էի. Կըրախալէնի կենդանագիրն էր ան : Մօրեղբորս սանուհին՝ Ալթօնա իր ազգականուհիներուն մօտ կը գտնուէր այն պահուն. իր բացակայութիւնը շատ տխրեցուցած էր զիս. հիմայ ա՛լ կրնամ խոստովանիլ որ գեղանի վերջնատուհին ու բրօքէսէօրին քեռորէին գերմանական բովանդակ համբերութեամբ ու հանդարտութեամբ կը սիրէին զիրար. մօրեղբորս մէս գաղտնի նշանուած էինք, որովհետեւ երկրաբան ըլլալով սիրոյ զգացումները չէր կրնար ըմբռնել : Կրախալէն մանկամարդ աղջկի մըն էր կապուտ աչքերով, խարտեաշ, քիչ մը լուրջ նկարագրով, ինչ որ արդելք չէր ըլլար ինծի տածած սիրոյն : Իսկ ես կը պաշտէի զինքը, եթէ երբեք այդ րոյ՞նը գոյութիւն ունի Թուտենքեան (հին գերմաներէն) լեզուին մէջ : Իմ մինիսիկ վերջնատուհին պատկերը մէկ րոպէի մէջ իրականութեան աշխարհէն անուրջներու, յիշատակներու աշխարհը նետեց զիս :

Մտքովս վերստին կը տեսնէի իմ աշխատութեանցս ու հաճոյքներուս հաւատարիմ ընկերը : Ամէն օր նէ կ'օգնէր ինծի մօրեղբորս թանկագին քարերը կարգի դնելու, զոր միտքին կը պիտակէինք : Օրիորդ Կրախալէն քաջ հանգաբան մըն էր : Կը սիրէր գիտութեան կրնձ-

ուտ խնդիրները խորաքննել: Քանի՜ քանի՜ քաղցր ժամեր անցուցած ենք մէկտեղ, և ո՞րքան բաղձացած եմ բողբոս ունենալ այդ անզգայ քարերուն, զոր կը շօշափէր նէ իր փափուկ մասներով:

Յետոյ զրօտանքի պահուն՝ երկուքս մէկին Արէրի թաւուտ ծառուղիներու մէջէն կ'ուզուէինք դէպ ի խոյժանուած հին աղօրիքը, որ լճին ծայրը հաստատուած այնքան գեղազգեցիկ զիրք մը ունէր: Ճամբան ձեռք ձեռքի բռնած կը խօսակցէինք: Բաներ մը կը պատմէի, որոնք իր ծիծաղը կը շարժէին. այսպէս մինչև Էրզրայի եզերքը հասնելով, ու մնաք բտրով մը բռնէ յետոյ կարապետներուն, որոնք ձերմակ ու մեծ հարկընտանեքու մէջ կը լուսային, չոգեկուրով քարափ կը գաւառայինք:

Արդ՝ անուրջիս այս անշուշտն էի, և ահա՜ մօրեղբայրս բռնեցքը սեղանին վարնելով ուժգնորէն իրախանութեան կոշեց զիս:

Տե՛ս, ըսաւ, ես այնպէս կը կարծեմ թէ՛ գրերը խառնաշփոթ ընծայելու համար, մօրեղբաւս մտքին ներկայացած առաջին գաղափարը սա կրնայ ըլլալ՝ փոխանակ հարկընտանիքի ուղղածիդ դիրքով գրել զանոնք:

— Ա՛ն քեզի բան մըն ալ, ըսի մոռով:

— Պէտք է փորձել թէ ի՞նչ արդիւնք կ'արտադրէ այս ձեւ շարուածքը: Աքսէլ ո՛ր է պարբերութիւն մը ա՛ն սա թուղթին վրայ և փոխանակ իրարու ետեւ շարելու յաջորդաբար, գրէ զանոնք ուղղածիդ սինտակսերու ձեւով, այնպէս որ հինգը կամ վեցը մէկ խումբի ձևացնեն:»

Հասկցայ թէ խնդիրը ի՞նչի վրայ կը դառնար, և խեղճն սկսայ վերէն դէպի վար գըրել:

Կ ե , ո Կ ալ

ը մ ի ւ ր է

ս ք մ չ ա ն

ի ե ա ի ի ո

ր զ ն կ ւ !

«Լա՛ւ, ըսաւ բրօթէսէօրը առանց գրած» կարդալու: Հիմա հարկընտանիքի մը վրայ շարէ տառեր:»

Գրեցի և հետեւեալ պարբերութիւնը ըստացայ:

Կ ե , ո Կ ալ

Կատարեալ, յարեց մօրեղբայրս, թուղթը ձեռքէս խլելով, ճիշդ հին վաւերագրին կը նմանի. ճայնաւորներն ու բաղաձայնները միեւնոյն անկարգութեան մէջ խմբուած են. նայն իսկ գլխագիրներ, ստորակէտներ կան բաւերուն մէջտեղ, Սաքնիւտէօի մագաղաթին մէջ գտնուածին յար և նման:

Շատ հանճարեղ գտայ այդ դիտողութիւնները:

«Արդ, ըսաւ մօրեղբայրս, խօսքը ուղղակի ինձի ուղղելով. քիչ մը առաջ գրած պարբերութիւնդ կարդալու համար կը բաւէ իւրաքանչիւր բառին առաջին գիրը, յետոյ երկրորդը, յետոյ երրորդը տունել, և այսպէս յաջորդաբար:

Ու մօրեղբայրս մեծ զարմացումով կարդաց հետեւեալը, որուն վրայ ես ա՛լ տեսիլ զարմացայ:

Կ ե , ո Կ ալ

«Հէ՛» ըրաւ բրօթէսէօրը:

Այո՛, առանց տարակուսելու, ձախուեր սիրահարի մը պէս վտանգիչ պարբերութիւն մը գրած էի:

— Ա՛հ, Կրախալէնը կը սիրե՛ս, յարեց մօրեղբայրս, խնամակալի ճշմարտ շեշտով մը:

— Այո՛... ո՛չ... թողնուիցի:

— Ա՛հ, Կրախալէնը կը սիրես յարեց մօրեղբայրս մեքենաբար: Է՛հ, ուրեմն իմ գտած կերպս կիրարկենք խնդրի առարկայ եղող վաւերագրին վրայ:

Մօրեղբայրս վերադառնալով թաղուելով իր պատուղիչ հայեցողութեան մէջ, մոռցաւ իմ անխուհեմ խօսքերս: Անխուհեմ կ'ըսեմ, որովհետեւ գիտունին գլգլխը չէր կրնար ըմբռնել որսի խնդիրները: Բարեբաղդաբար վաւերագրին խնդրով յափշտակուած էր:

Իր գլխաւոր փորձը ընելու կէտին վրայ՝ բրօթէսէօր Լիտնպրօքի աչքերը շողեր արձկեցին իր ակնոցներուն մէջէն. մասնները դադարեցին երբ հին մագաղաթը ձեռքն առաւ. լրջօրէն յուզուած էր: Վերջապէս ուժգին հազաց ու լգլջ ձայնով մը արտաբերելով իւրաքանչիւր բառին առաջին, յետոյ երկրորդ գիրը, այսպէս յաջորդաբար հետեւեալ շարքը տուն տուաւ ինձի:

Շար.

ցած ենք նամակնիդ և քառթերնիդ. չուտով
կը զրկենք պատասխանը :

Բարիդ. — Տ. Տօղրտմաճեան էֆ. — Եր-
նորհակալութիւն. ստացանք նոր շրջանի
բաժնեգիրքը, ընկալագիր կ'ստանաք. յանձ-
նարարութիւննիդ կատարուած է :

Իզմիր. — Մ. Ն. Միքայէլեան էֆ. —
ձեր նամակաւ քիմիական պարարներու գոր-
ծածութեան և մասնաւորապէս անոնց այ-
գիլի ու ձթեմնի կիրարկումի մասին անմի-
ջակտն տեղեկութիւն կ'ուզէիք. կարծելով որ
հիմա ժամանակն է. բայց ո՛չ. այդէն իսկ
ժամանակը վաղուց անցած է. այդ պարար-
ները կուտան ծառերուն, ընդհանրապէս աշ-
նան մէջ, և ոչ թէ գարնան. ուստի՝ ժամա-
նակ ունինք տակաւին, և թերթիս մէջ մա-
տաւորապէս կը բացատրենք ընդարձակօրէն :

Մանիսա — Գ. Կ. Ունճեան էֆ. — Ձեր
յանձնարարութիւնը կատարուած է. աճա-
պարանօք մոռցած ենք յիշելու թէ ձեր ը-
սած գրքէն տպուած չի կայ :

Սիլվիլի. — Գործակալ. — Նամակ զրկա-
ծ ենք. ձեր յօդուածներուն կը սպասենք :

Շապին գապահխար. — Սերովբէ էֆ. Կ.
Մէլտօնեան, — Համակրալիւր նամակնիդ ստա-
ցանք, թերթ կը զրկենք. բայց ձեր յանձնա-
րարած անձը կ'ըսէ թէ, բաժնեգիրք վճա-
րելու մասին իրեն բան գրուած չէ. հաճեցէք
նամակաւ զեկուցանել :

Մակարա. — Յ. Վեամ էֆ. Արապեան. —
Կ'ըսէք թէ պակաս թիւեր ունիք. եթէ մին-
չե ցարդ մեզմէ պահանջուած ըլլար, ան-
պատճառ կը զրկէինք. ուստի հաճեցէք մօ-
տաւորապէս կամ տեղւոյդ գործակալութեան
միջոցաւ և կամ ուղղակի պահանջել խմբա-
գրութեանէ : Հարցումնիդ ուշադրութեան
առնուած է, կը պատասխանուի :

Պանտրմա. — Գ. Արզումանեան էֆ. — Կը
զրկենք Ձեր պակաս թիւերը, 21, 22, 23 :

գործնական ոճով բժշկութեան, վիրաբուժութեան
Աւողջարանութեան, ճարտարարուեստից, Բնաբա-
նութեան, Քիմիայի, դեղերու. Բնական պատմու-
թեանց, Աստղաշխութեան, Երկրագործութեան և
այլ գիտութեանց վրայ :

Ըստ կարելւոյն ամենայն խնամք տարուած է բա-
ռերու ճշգրտութեան : Բնագարձակ բացատրութիւններ
կուտայ իւրաքանչիւր նիւթի վրայ, ի բաց առեալ ա-
մէնէն անգործածական նիւթերն. իսկ կարեւոր նիւ-
թոց վրայ էջերով օգտակար տեղեկութիւնք տնպա-
կաս են : Այս աշխատութիւնը որպէս զի յիշեան կա-
տարեալ ըլլայ, հեղինակը իրեն առաջնորդ բռնած է
շատ մը հանրադիտական եւրոպական բառարաններ :

Գիտական բառերու մասին առաջնակարգ թի-
կունք եղած է այս գործիս վ. Հ. Քաջուհոյ Հաբա-
էթէլ ընդարձակ ընտիր բառագիրքն, իսկ բոլորց մա-
սին վ. Հ. Ալիշանի Հայբաշի : Աւելորդ չէ համար-
ուած գիմելու նաեւ մասնաճէլգերու վրայ խօսող գրք-
երու օգնութեան :

Հեղինակը խնամք եւրոպական ընտիր գործերէ քա-
ղելով ամենէն գործնական և օգտակար գիտութիւններն
զանոնք խմբադրած է մի հատորի մէջ՝ զարդարելով
ամեն ճիւղի վերաբերեալ դեղեցիկ պատկերներով :

Այն գործը պիտի լրանայ 50 տ. թածալ թերթերու
մէջ, իւրաքանչիւր թերթի երկայնութիւնն է 24 հա-
րիւրորդամեզը, լայնք 16 հրմ. գրերն մանր և գիւր-
ընթեռնի :

Իւրաքանչիւր թերթի բաժանորդագինն է 20 պան-
թիմ, տմբող գիրքն 10 ֆրանք (— 1 ըուրլի, 2 տու-
ար) զոր կանխիկ ներփակեալ տոմսակաւ պէտք է փա-
փաքողն յղէ առ Տեսչութիւն վեհեաիկի Մխիթար-
եան Տպագրատան. ապահովագրեալ նամակաւ եթէ
կ'ուզէ ընդունիլ թերթերը :

Թերթերն կը զրկուին հինգ Իւրաքանչիւր
անգամ : Ռուսաստանի և Տաճկաստանի համար յայտ-
նի է թէ լաւագոյն է յանձնարարականաւ (recom-
mandé) զրկել. առ այս փափաքողն պէտք է 5

Պառնի հաշուէ, որով բաժանորդագրոյն վրայ ա-
ւելցնէ ֆր. 2,50 — (12,50 ֆր. — 5 ըրլ. — 4 ու կէս
թիւնարան զի կորստեան պատասխանատու չէ Տես.) :

Վտրւելլ :
Տպագրութիւնը աւարտելէ վերջ, բառգրքին գիրք
պիտի բարձրանայ 15 ֆրանքի. բաց ի թղթատարի
ծախուց* :

* Վերագրեալ ազդի վրայ՝ Հանրադիտակի բոլոր
Գործակալներու և Բաժանորդներու աւագրութիւնը
կը հրաւիրենք, և կը յանձնարարենք վեր. Հ. Ս. Ե-
րամեանի սոյն հմտոյի և արգիւնաշատ գործը, որ ո՛չ
միայն ֆրանսագէտ հայերու, այլ մինչեւ իսկ ֆրան-
սերէն չգիտցող ամէն Հայ դրագէտի, բանասերի և ըն-
թեքցողերի համար կարեւոր է, և անոնց չափ և
աւելի կրնան օգտուիլ այդ բառարանի ուղղութեանէն.
քանի որ ամէն բառի առջեւ պիտի գտնան ընդարձակ
վտրնեութիւններ, լուսաբանուած խնամաւոր պատ-
կերարացոյ Ե. Ս.

Ա Ձ Դ

ԳԱՂ. ՀԱՅ. ԳՈՐԾՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՅ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ. Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Սոյն բառգիրքը կը խօսի աշխարհիկ լեզուով և

ՇԵՐԱՄԻ ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ՀՈՒՆՏ

Որոնք որ կ'ուզեն շերամի ամենէն
ընտիր հունտերը ունենալ, պէտք են
դիմել Պրուսայի «Իրէք Խան» կոչուած
մետաքսի վաճառատեղոյն՝ հետապա-

ճառ Գրիգոր Փամպուլքեանի, որ բասթօրեան դրութեամբ՝ չերամի ամենաընտիր հունտը կը պատրաստէ և կը մատակարարէ իրեն դիմողներուն, խիստ գոհացուցիչ զիններով:



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
ԹԵՅԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ձինական, Հնդկական և Ճաբոնական ամենաընտիր տեսակէ եղող արտադրութիւնները պիտի գտնէք ապահովաբար վերոյիշեալ պատուաւոր վաճառատան մէջ անհամեմատ աժանութեամբ:

Գաւառներու համար, յանձնարարութիւնները փովթով և ճշգիւ կը կատարուին:

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, ձէլալ Պէյ խանի տակ, թիւ 10. սոյն վաճառատան ապրանքները ժողովուրդէն գընահատուած ըլլալով, շատեր անոնց կեղծը հրապարակ հանաւորութեամբ զգուշանալուն համար, վերոյիշեալ փաճառանիշին տակ Կ. Եաւրոսեան և Յ. Իսագոսեան ստորագրութիւնով փնտռեցէք:

Եթէ ՈՏՔԻ ԿՈՇՏԵՐԻ
(ՆԱՍՏՐ) ԿԸ ՆԵՂՈՒԻՔ

Դիմեցէք առանց երկմտելու, Գուժ-Գափու Ջարիֆեան գեղարանը, ուր պիտի ստանաք 5 դահեկանի փոխարէն, փոքրիկ սրուակի մը մէջ, Ա. Ջարիֆեան էֆ.ի հնարած «հակակոշտային» հեղուկը՝ բացատրութիւնով մէկտեղ:

Գաւառներէ ուղղորդուող կը շրջանառու թղթատարով:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

Արեւելեան Մատու. 29րդ Տարի, Կիսամաթերթ, Երազային, Գրական և Քաղաքական խմբագիր-Տնօրէն Մ. Մամուրեան: Տարեկան կանխիկ 80 դր ըստ 17 ֆրանք, Ուսուցիչներու համար 60 դր կամ 13 ֆրանք: Հասցէ՝ Մ. Մամուրեան, Իզմիր:

Բազմալեզ. - 57րդ տարի, ամսաթերթ, Հայ մատենագրական, ստուգարանական, պատմական, քերականական, աշխարհագրական, հնախոսական, ուրիշ - Տարեկան կանխիկ, 10 ֆրանք:

Հասցէ՝ Rédaction de la Revue "Bazmavep", St. Lazare Venise (Itali)

Հնդկ-Ասորեան. 13րդ տարի. ամսաթերթ. Հայ գրական յօդուածներէն զուտ ճշտիւ տեղեկութիւն կուտայ Հայ. գրականութեան, Պատմութեան եւլի նկատմամբ, ամէն ամիս նոր հրատարակութեանց վերայ եւլի եւլի: Տարեկան կանխիկ 10 ֆրանք:

à la Rédaction de la Revue "Hantess",

VII/2 Mechitharistengasse 4.
Vienne (Autriche)

ՀԱՅ ՇԱՔԱՐԱՎԱՃԱՌԸ

Եթէ կուզէք պատուական, համով հոտով և աժան «լոգումշէքերի» ուտել, դիմեցէք առ Սարգիս էֆ. Ալէմեան, Էսկի-Չապթիյէ, թիւ 57, ճիշդ թուրքիա Օթէլի անկիւնը:

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'ստորագրէ մի միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈՒԱՏ, որը դիմել պէտք է, առանց բացառութեան, թղթիս վերաբերեալ ամէն գործառնուած համար:

در علیہ دہ بفتحہ قوسندہ اسکی ضبطیہ دہ
۱۹ نومروی دکاندہ «مجموعہ علوم» غرض
سر محرری (بولاد) افندی

Ղ. Բուլատ Տնօրէն-Խմբագրապետ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղլէ-Գափու
Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",

19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul